


# Ա Խ Օ Ն

Ա Մ Ս Ա Գ Ի Բ

Ը Ն Գ Ե Յ Ե . Բ Ե Լ Ո Ւ Ր Ե Յ Ե . Դ Ր Ե Վ Ե Յ Ե Յ  
Ե Ւ Ք Ե Վ Ե Յ Ե Յ


Մ Ե Տ Ա Ս Ա Ն Ե Ր Ո Ր Դ Տ Ա Ր Ե  
Ճ Ր Զ Ա Ն Մ Ի Ա Մ Ե Ա Ց



Յ Ե Ր Ո Ւ Ռ Ե Լ Շ

Ի Տ Պ Ա Ր Ա Ն Ի Մ Բ Բ Ո Ց Յ Ա Կ Ո Վ Բ Ե Ա Ն Ց

1876



# Ա Բ Ռ Ո Շ

ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ  
Թիկ 4.

Ա Մ Ս Ա Գ Ի Ւ

մարտ. 30  
1876.

Ա.Զ.Ա.Յ.Ի.Ն., ԲՈՆԱՍԻՐԱԿԱՆ ԵԽ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ

## Կ Ր Թ Ա Ր Ա Ն Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն Ա Կ Ա Ն Բ Ա Ն Ի Ծ Դ Ա Ս Լ.

Հ Ե Ր Մ Ա Ս Ե Խ Ո Ն Ե Ս Ի Մ

Տրամախօսութիւն ՚ի Ղուկասու. թ. 43-56. \*

Հերմաս. — Ա Յ Ո Կ Ե Ր Տ Ա Յ ա մ ք ա ր տ ա ւ ա ն ու թ ի ւ ն տ ե ս ա ն ք , տ ե ս ն ե ն ք ա յ ժ մ ն ո ց ա հ ն ե ր ո զ ա մ ո ու թ ի ւ ն ։ Ն ո ք ա մ ի մ ա ր դ տ ե ս ա ն , ո ր գ ե ւ ե ր կ ը հ ա լ ա ծ է ր . հ ա ւ ա ն ա կ ա ն ա ր ա ր , յ ա ն ո ւ ն Յ ի ս ո ւ ս ի ֆ ր ի ս ո ւ ս ի , հ ի ւ ա ն դ ն ե ր կ ը բ ժ շ կ է ր : Ա ւ ե տ ա ր ա ն ի շ ն չ ա ս է ր թ է

\* Հ ա ր ա ւ ա կ ու թ ի ւ ն և վ ե ր ջ :

ա յ ս մ ա ր դ ն կ ը ջ ա ն ա ր գ ե ւ ե ր հ ա լ ա ծ է ր ի ր ա պ է ս , Ո վ լ է լ ո ւ ր ա խ ա ն ա ր , ե ր ք տ ե ս ն է ր , ո ր թ շ ո ւ ա ռ ո ւ ն ե ր ն ի ր ե ն ց ա խ ո ւ ե ր է ն կ ա զ ա տ է ի ն : Ա շ ա կ ե ր ս ն ե ր ն մ ի ա յ ն՝ չ ե ն ո ւ ր ա խ ա ն ա ր ա յ ս մ ա ս ի ն : Ա ր դ ե օ ք ս ո յ ն բ ժ շ կ ո ւ թ ի ւ ն ն ե ր ն վ ա ս տ մ ի ջ ո ց ն ե ր ո վ կ ը կ ա ս տ ա ր ու է ի ն , կ ա մ զ օ ր ու թ ե ա մ բ խ ա ւ ա ր ի ի շ խ ա ն ի ն կ ը գ ո ր ու ծ ո ւ է ի ն : Փ ա ն զ ի գ ե ւ ն կ ա մ չ ա ր ո գ ի ն

Եւս երբեմն բարերար կը ձեւանայ , ըստ նիւթականին և աշխարհային բարեաց հրապարներով հոգիներն կը մոլորեցնէ . քանզի չար ողին ամեն ժամանակ գործած է այս տեսակ հրաշք-ներ և տակաւին կը գործէ և մեր մըտածածէն աւելի կը գործէ : Բայց կը տեսնենք , որ աշակերտներու պատմած մարդասիրական գործն կամ հրաշքն յանուն Յիսուսի Քրիստոսի կը գործուի , և տարակայս ըլ կայ որ սոյն անձանօթի ինքնակամ առաքելութիւնն համաց պիտի լինի Աստուծոյ :

Մեք նոյն իսկ աշակերտաց քերանէն կ'իմանանք այս մեծ խնդիրն , այսինքն նոքա են , որք միամստոթեամբ կը պատմեն իրենց վարդապետին թէ մի մարդ տեսանք , որ քո անուամբ , քո անուան կ'ըլլէ դեւեր կը հանէր : Հետեւապէս , սոյն պարագան կը պարտաւորէր աշակերտներն , որ ուրախանային , սքանչանային , որ մարդկանց այսպիսի իշխանութիւն և զօրութիւն տրուած է և այս զօրութիւնն Յիսուսի անունն կուելու մէջ կը բովանդակի : Բնդհակառակն՝ նոքա ոչ միայն չեն ուրախանար , այլև կ'ընդդիմանան , այլև կ'արդելուն սոյն բժշկութիւններն : Եւ ինչ պատրուակաւ . — տղայական անտեղի պատճառաբանութեամբ : Աշակերտներն կ'արդելուն այն պատճառաւ , որովհետեւ նոյն մարդն իրենց հետ ըլհետեւիր Յիսուսին , կամ աւելի լու ասել , իրենցմէն չէ : Նա կը գործէ այն , ինչ որ աշակերտք միայն իրենց իրաւունք կը համարին գործել : Աւելի յառաջ երթանք , աւելի խոր թափանց ցենք և աւելի հետազոտենք աշակերտաց մասնութիւնն : Գիտէք , թէ ինչ չու համար կ'արդելուն . — վասն զի իրենք չեն կարող գործել , ինչ որ նոյն մարդն կը գործէ : Զը տեսամբ արդէն , որ նոքա - Յիսուսին հետեւողերն - չը կա-

բացին լերան ստորամ գանուած դիւ ւահարն բժշկել Նոքա կը յիշեն իրենց անկարողութիւնն եւ կուզեն բոլոր մարդիկ նոյն անկարողութեան դատապարտել :

Ոնեավմ . — Բաւականին կծու կը իսօսիք եւ թերեւս այնպիսի բաներ կ'ենթադրէք , որ ասկացուցանել անկարող էք : Պէտք է զգուշանալ պէտք է խնայելով յառաջ բերել այդպիսի ենթագրութիւններ . այս մի ընդհանուր կանոն է , որուն ենթակայ համարելու ենք նոյն իսկ առաքեալներն . ըլ գիտեմ թէ ինչու բացառութիւն պիտի լինի նոցա համար : Ես իմ կողմէն չեմ արդարացներ առաքեալներն . քանզի Յիսուսի Քրիստոսի պատմաս խանն արդէն յանդիմանութիւն կը պարունակէ իւր մէջ Նկատողութեան առնունք ուրեմն և մեք սոյն պատմաս խանն , եթէ յարմար կը գատիք :

Հերմաս . — Ես կարող եմ շատ թողուլ ձեզ . քանզի առատ եմ : Սակայն ինչ պիտի ասէք հետեւեալ իրողութեան մասին : Աներող Սամարացիք , բայց ոչ աւելի աններող քան աշակերտներն , ընդդունեցին զՅիսուս , ըհկերընկալեցին : Այս մի մեծ միաւլ մունք է , մանաւանդ որ չեն Ճանաչեր զՅիսուս Քրիստոս : Այսու ամենայնիւ՝ քարերու հարուածներով չեն արտաքսեր իրենց մէջն և ոչ բանիւ կը վերաւորեն : Մի զարմանաք , որ կը համարիմ ես սոյն կէտին վերայ : Պէտք չէք , որ Սամարացիք անէին այս ամենն և աւելի վատ , ոչ թէ արդարացնելու , որ անհնարին է , այլ աշակերտաց սոսկալի գրգիռն թեթեւցնելու ու ներելու համար : Ինչ կ'անեն աշակերտներն : Նոքա կ'առաջարկեն Յիսուսին հուր իրեցնել երկնքէն Սամարացւոց վերայ և այրել : Յովեան , Հին Կոտակարանի այս մարդն , աշակերտներէն

առելի խստամիրտ չէր առ Նինուեացին : Յով. Դ . 1 :

Աշակերտաներն կուղեն մի անդնդմի ջական հրաշալի և զարհութելի պատիժ . նպա կուղեն մի և նոյն հուրն , որ լավեց կործանեց զլոդոմ : Այս բաւական չէ , իբր թէ վրէմինդրութիւնն իրենց կը պատկանի , (Եբր. Փ . 30 : Հոռմ . ՃԲ . 19 .) այնպէս կը կարծեն , որ կարող են ինքնին երկնքի շանթերն երկրի վերայ իջեցնել : Մինչդեռ պահ մի առաջ չը կարացին գթութեան հըրացք գործել և գիւահարն բժշկել , այժմ այնպէս կը համարին , որ կարող են գործել հրաշք խստութեան . կ'երեւի թէ բժշկելու զօրութիւն չունին , բայց սպանանելու և կործանելու զօրութիւն ունին : Այն գատապարտելի յուսով մեծ մարդիկ կ'երեւին իրենց աչքին . մեծ արժանաւորութիւն կը թուի իրենց՝ լինիլ գործի անողորմ արդարութեան : Եւ ամեն ժամանակներ ու պարագաներ իրար հետ շփոթելով կը համարձակին Եղիսյի անունն արտասանել և իրենց անձն նմանեցնել այն մարդարէին , զրո պահ մի առաջ տեսին ՚ի փառս Թափորի ընդ Մովսիսի և ընդ Յիսուսի Քրիստոսի : Ի՞նչ կը մտածէք այսքան խստութեան , աններողութեան և ամբարտաւանութեան վերայ : Ի՞նչպէս կը տեսնէք , այլ եւս բան մի պակաս մնացած կայ :

Ոնեսիմ . —Աստուած մի արասցէ , եթէ ես սպաշտապանեմ այդպիսի դգացումներ և այդպիսի պահանջումներ , ինչպէս է աշակերտացն : Բայց կ'աղացմէմ միայն , որ լաւ նկատողութեան առնուք Վարդապետի խօսքերն ու վարմունքն բոլոր պարագայից մէջ : Առետարանին պարզապէս կ'ասէ միայն թէ՝ Սասպեաց ՚ի նոսա : Եւ ի՞նչպէս , ի՞նչ խօսքերով : Ահա նորա բոլոր սաստն . “Ո՞չ գիտէք , որոյ հոգւց էք դուք ” :

Արդեօք այն հոգւցն վերայ կը խօսի , որով նոքա բորբոքուած էին : Արդեօք իւր Աւետարանի հոգւցն վերայ կը խօսի : Քննութեան հարկ չը կայ այս մասին : Յայտնին միայն այս է , որ Յիսուս իբր տգէտ կը համարի իւր աշակերտներն : Արդարեւ՝ նոքա տգէտ էնին : Կանդիտանային ինչ որ մարդը յաճախ կը մոռնայ . նոքա կանդիտանային ինչ որ իրենցմէն յետոյ մարդիկ տակաւին չըդիտացին . նոքա կ'անգիտանային՝ ինչ որ իրենցմէն մին , թէ և շատ ուշ , ուսոյց մեղ թէ . “Բարկութիւն մարդոյ զարդարութիւն Աստուծութիւն ո՞չ գործէ ու Աշակերտներն տակաւին չէին թափանցէր , չէին ըմբռնել նոր տնտեսութեան յատկութիւնն , նոր Յրինաց ոգին , որ է ոգի ազատ հընազանդութեան . քանզի , ըստ նոր տնտեսութեան , մարդն հաւատով կ'ընթանայ եւ ոչ տեսութեամբ : Արդ՝ անմիջական պատիմն տեսութեան և ոչ թէ հաւատոյ անտեսութեանն կը վերաբերէր : Յիսուս Քրիստոս կը յանդիմանէ աշակերտներն իրենց տգիտութեան համար , որ թէսպէտ կամաւոր չէր , բայց անմեղ եւս չէր : Յիսուս աշակերտաց տգէտութիւնն յանդիմանելով՝ կը հաստատէ միանդամայն մի մեծ ճշմարտութիւն , այն է , որ նորա թագաւորութիւնն երկրիս վերայ չէ թագաւորութիւն խստութեան նոյն իսկ նոցա դէմ , որք զինքն չեն ընդունիր , այլ կը հակառակին և կը գիմադրէն : Ի՞նչ կ'ասէ Յիսուս . “Որդի մարդոյ ոչ եկն զոգիս մարդկան կորուսանել , այլ կեցուցանել ” : Այս բացարձակ յայտարարութիւնն մի վըճռական դատապարտութիւն է ամեն աշխարհային խստութեան և աններովութեան , որ գործ կը դրուի յանուն Յիսուսի Քրիստոսի՝ իբր ՚ի շահ և ՚ի պաշտամանութիւն նորա Վարդապետ

տութեան։ Յիսուս Քրիստոս ոչ մի պատիմ ըստ սահմաներ Սամարացւոց, ոչ աշակերտաց դաւուն նախանձախընդդրութեան երեւակայած պատիմն եւ ոչ մի այլ թեթեւ պատիմ։ Ի՞նչ կ'ասէ Յիսուս։ Բ'նչ քաղաք կամ տուն, որ ձեր ողջոնն ընդունի, թօթափեցէք ձեր ոտից փոշին վկայութեան համար, Նոյն քաղաքն կամ տունն ինքնին կը պատմուին։ «Եթէ իցէ անդ որդի ողջունի (այսինքն եթէ ընդունին զձեղ) հանգիցէ ՚ի վերայ նորա ողջոյնն ձեր։ ապա թէ ոչ՝ ՚ի ձեզ դարձի ո. Առաջ. Ժ. 6. Եթէ աշակերտներն պատիմ ինդրելով Սամարացւոց համար՝ սըսալմունք գործեցին, զոր ես ինքնին կը ճանաչեմ և զոր չեմ ներեր երեք, հաւատացէք սակայն, որ այս իրողութիւնն այն առիթներէն մին է, որուն համար պէտք է կրկնել Արքոյն Օդոսահինոսի հետ «Ովկ բարեգէպ սիսալմունք»։ քանզի մի կարեւոր և լուսաւոր դաս եղաւ այս Յիսուսի Քրիստոսի կողմէն։ Ամեն բռնութիւն, ամեն հակառակութիւն նա եւ ամեն սպառնալիք, որ քրիստոնէութեան օգուտն պաշտպանելու պատրուակաւ պիտի գործուէին, դասապարտուած են նոյն օրէն ՚ի վեր, եւ Յիսուսի Քրիստոսի Եկեղեցին կարող չէ հալածել առանց անհնազանդ գտնուելու իւր Փեսային։ Ահա քեզ նորէն մի երկար ընդհատութիւն, ներեցէք ինձ, կ'աղաչեմ։

Հերմաս. — Դուք ընդհատեցիք իմ խօսքս. քանզի ես վերջացուցած էի. բայց խօսքը ձերն է։ Կը յիշէք այժմ, ինչ որ խոստացաք ինձ։

Անեսիմ. — Այս, կը յիշեմ։ Ինչ որ Աւետարանն մեղ կ'աւանդէ, ինչ որ տասն և ութ դարերու և հազարաւոր մշններու հետաւորութեամբ մեղ ցոյց կը տայ, ես ամենն իմ աչքով

տեսայ և ամեն օր կը տեսնեմ։ Հիմն բոլորովին նման է, միայն թէ ձեւն նցն չէ։

Դուք ցուցիք ինձ աշակերտներն արդ է լուած, երբ իմացան նոքա Որդւոյ մարդոց բերանէն թէ ինչ կը սպասէ իրեն յերուաղէմ, և դուք իրաւամք սիդէցիք այս կէտին վերայ թէ. «Նորա երկնչէին հարցանելցնա վասն բանին այնորիկ ո. Այսօր ոչ ոք կը կարօտի Յիսուսի մարմով յաշխարհ գալու անհատ տնօրեւ նութեան պայմաներն նոր ՚ի նորոց քըն նել և ուսանիլ. քանզի երկար ժամանակ է, որ անեայն ինչ կապարեալ է այս մասին։ Բայց ինչ է, որ կատարուած չէ. — չարչարանքն Եկեղեցւոց, որ է մարմին Քրիստոսի։ Եկեղեցին ևս դարուց ՚ի գարս մասնեցաւ ՚ի ձեռու մարդկան։ Քրիստոս գուշակած էր, և մեք կը տեսանեմք զայն։ Բայց նո, որ կը ճանաչէ այս մարդարէութիւնն. նո, որ կը համաձայնի թէ՝ ծառայն իւր տիրողմէն առաւել չէ. նա, որ գիտէ թէ՝ զոր փայտն կարող չէ խուսափել այն կրակէն՝ որ արդէն գալոր փայտն այրեց. նա կը զարմանայ սակայն սոյն մարդարէութեան իւրաքանչիւր նոր կատարման ժամանակ, իբր թէ Քըրիստոս կարող էր սիսալիլ, իբր թէ Աւետարանն կարող էր աւետարան ինչել գագրիլ, իբր թէ մարդն այլ ևս մարդ չէր։ Կը զարմանայ նա ոչ միայն արիւնահեղ հալածանաց վերայ, ոչ միայն անթիւ ու անհամար թշնամանաց ու զրկանաց վերայ, ոչ միայն Եկեղեցւոց կրած վկայաց վերայ. այլ կը զարմանայ մանաւանդ այն հակառակութեանց և ընդդիմաբանութեանց վերայ, զորս կը կրէ ինքն իբրեւ քրիստոնեայ . . . :

Հերմաս. — Դուք ամեն բան կ'ասէք եւ գուշակելու բան չէք թողուր ինձ։ Խօսքն կը փախուի. դուք կը նկրու

տեք բրիստոննեայքն դատել։ Դաքինձմէն բան չէք ծածկեր։ մեր խօսակցութեան սկզբէն ես հասկայ։

Ոնեալմ։ — Անտարակցու , եւ ինձպէտք չ'էր այնպէս ձեւանալ , իբր թէ կը կասկածիմ ձեր հասկացողութեան վերաց . Թողմունք այս անօգուտ պատճառանքն ու կեղծիքն։ Այս , քրիստոնէից է , որ կը տամայն յանդիմանութիւնն , զոր դուք պահ մի առաջ առաքելոց տուիք . Կան քրիստոննեայք , որոնք կը զարմանան մինչեւ անդամամանաթեթե ձախորդութեանց վերաց , որուն կ'ենթարկուին իբրեւ քրիստոնեաց . Կան նաեւ քրիստոննեայք , որք շատ բնական կը համարին , որ Քրիստոս չարչարուած է , մարտիրոսք չարչարուած են , ամբողջ հօտն կրած է տանիջանքներ , գերութիւնն , բանտ , արտոր , և սակայն անկարող կը լինին Աւետարանի թշնամեաց կողմէն եղած մի ծուռ նայուածքի կամ մի արհամարհանաց ժպիտի համբերել։ Խնչ որ իբրենց կը պատահի , միշտ կը մեծցընեն և կը ծանրացնեն։ Ամեն անիրաւութիւն կը մեկնուի . բայց իբրենց պատահած անիրաւութիւնն անմեկնելի է . Ամենաթեթեւ լիշտն՝ կամ փորձութիւնն անդամ , զոր իբրենց Տէրըն կը զպկէ , իբրենց միտքն ու բանականութիւնն կը չփոթէ։ Նոցա այնպէս կը թուի , որ արտօնաւորուած են ժառանգել խաղաղութիւն , ամենակատարեալ խաղաղութիւն , և արտօնաւորուած են այն Յիսուսէն , որ եկաւսուր և հուր արկանել յերկիր եւ ոչ խաղաղութիւն . Խնչ ժառանգներ . ինչ յաջորդներ . ինչ չարունակողներ Քրիստոսի և քրիստոնէութեան . ինչ ժառանգորդներ , որք առաջին աշխերտաց թերահաւատութիւնն միայն կը շարունակեն . ինչ կայ առաւել սուվորական ճշարպութեան վիայից մէջ ( այս

անունն է , զոր կարելի է տալ քրիստոնէից ) քան հարցնելու և իմանալու երկիւղն . քան ճշնարարութիւնն ճանաչելու վախն , ինչպէս որ աշակերտք կ'երկնչէին հարցնել . Յիսուս Քրիստոսին հարցնելու կարեւորութիւնն ամեն ժամանակ կը ներկայանաց , և Յիսուս Քրիստոս որ միշտ պատրաստ է թողութ որ հարցնեն , պատրաստ է միշտ և պատասխանելու :

Եատ անգամ Յիսուսի պատասխանըն լսելու համար ուրիշ բան պէտք չէ , եթէ աչ իրենց սրտի մէջ իջնել , իրենց սրտան քննել։ Այսպէս կանե՞ն քրիստոննեայք . Կը համարձակին այս պէս անել , բանի որ պէտք է անշուշտ ընթրել , կարծիք մի մերժել կամ պարտք մի ճանաչել և կատարել։ Կը համարձակին մինչեւ իրենց մտածութեան ծայրն դիմել , ուր եթէ դիմելին , պիտի Յիսուսի Քրիստոսի պատասխանն գտնելին . Կը համաձայնին միշտ հարցնել և քննել կընկունիքն յօժարակամ մի կարեւոր լիճարանութիւն . Քանի՞ քանի՞ անդամ տեսնուած է , որ խոյս կը տան հանդիպող առիթէն , կը խուսափին մի օգտակար բանախօսութենէ , որով կարող էր իրենց միտքն լուսուորիլ . Զե՞ն ասեր , որ կանոն դըրած են , հաշիւ տեսած են ճշմարտութեան հետ , և ժամանակ որոշած են իրենց կենաց մէջ , որ այսուհետեւ այլ եւս ուսանելու բան չ'ունին , կամ լաւ եւս ասել բան մի պիտի չ'ուսանին . Մէրթ երկշուսութեամբ , մէրթ թուլութեամբ , մէրթ ծուլութեամբ , նոքա միշտ կըզգուշանան հարցնել Յիսուս Քրիստոսին և որչոնի կարելի է հեռի կը կենան նորածայնն լսելին և հասկնալին : Այս եղանակաւ ահամ , նոքա կ'իմանան միւայն , ինչ որ իմանալ կ'ուղեն կամ ինչ որ ակամայ իմացան , չը կարենալով

գիմադրել : Ի՞նչ կը կարծէք . չը կան այսպիսի մարդիկ քրիստոնէից մէջ : Ոչ մին չէք ճանաչեր անձամբ :

Հերմաս . — (Հառաւաշելով) : Թերեւ մին կը ճանաչեմ :

Ոնեալմ . — Հաւանաբար՝ ամեն քրիստոնէի մէջ մի հատ կայ : Բայց պիտի տեսնենք քրիստոնեացք , որք վլաճն իրարութեան կետ ներ ո՞ւ պիտի թծ լնի : Բայտ երեւութին չը կայ այսպիսի քրիստոնեայ , որ ՚ի տես մարդկան , եւ աշակերտաց նման առաջի Յիսուսի , կամ ինքն իւր յատուկ անուամբ մեծութեան համար վլաճէ : Բայց այս ամեն զգուշութեանց մէջ ի՞նչ կը կորուսանէ չարի : — Խիստ ստկաւ բան : Թող մարդ բարձրացնէ զինքն համարձակ , կամ թող յամառութեամբ և վեսութեամէ պաշտպանէ իւր զգացումն իբրեւ միակ բարի , իւրդրութիւնն իբրեւ միակ կատարեալ իւր աղանդն՝ իբրեւ ամենէն լսան , վերջապէս իւր մարդն՝ իբրեւ ամենէն մեծ , ի՞նչ կը լինի այս տեղէն : Այս կը նշանակէ կեզծել պատրուակել և աւելի վատ պատրուակել մարդկանց առջեւ իւր սեպհական օդուտներու համար ունեցած գաղափարն և իւր փափաքն՝ տեսնելզոք իրմէն վար , տեսնել իւր ուռքերու տակ , որ ամբարտաւանութեան ամենաքաղցր հաճոյքներէն և բաւականութիւններէն մին է , թէեւ ամբարտաւանութիւնն ո՞չ կը բաւականանայ և ո՞չ կը յագի երբէք : Այսպատմած օրինակս կարծեմ թէ բաւական է : Դուք չէք կարող ասել ուրեմն թէ այսպիսի դէպքեր սակաւ են և կամ թէ աշակերտաց ունայնասիրութիւնն կամ հալարտութիւնն խկապէս կը տարբերի ուրիշներէն : Առաջինն միշտ չափազանց և համարձակ կը թուի . ահա այս է պատճառն , որ աշակերտաց արածին վերայ կը զարմանաք : Աշակերտք կը պարծին , և լինէն իրավու հետ մի

յատուկ և անձնական մեծութեան վերայ : Մենք աւելի մեծն կ'անենք , եթէ կարտղանանք . քանզի մենք եւս մեր ձեռքէն եկածն համարձակ կ'անենք . միշտ զմեղ կը մեծյնենք . բայց այս այն մեծութիւնն չէ , որով մեր Տէրըն մեծացաւ . մենք միշտ մի ուրիշ զգեստ կը հագնենք , մի ուրիշ զարդով կը զարդարուինք , որ խոնարհութիւնըն չէ և կը չանանք բարձրացնել ըզւմեզ Նորա առջեւ , որ զմեղ իւր Հօր հետ հաշուեցնելու համար՝ խոնարհեցաւ և իւր անձն ունայնացցոյ : Որչափ վատթարագոյն համարենք , ինչ որ արին աշակերտներն ՚ի սոսրոտս Թափորի , այնու ամենայնիւ , այս եւս պիտի չը մօռնանք , որ նոցա շնորհիւ մի դաս , մի զգուշութեան օրինակ ունեցանք մենք , զոր նոքա չ'ունեին : Այն մասնուկն , զոր Յիսուս ներկայացցոյ նոցա , և որով անշուշտ կամեցաւ նա որ ինքնին քննեն իրեւոց անձն , այն մասնուկն մի յաւիտենական յանդիմանութիւնն է մեր մեծամտութեան : Մենք աւելի լաւ գիտենք ( աշակերտք կարող չ'ին այն ժամանակ իմանալ ) թէ ի՞նչ արժէք ունի և ի՞նչքան էական և առլեշակից է Քրիստոնէութեան՝ խոնարհութիւնն , սոյն նոր առաքինութիւնն , որոյ օրինակն պէտք էր որ տար մեզ Աստուած , որպէս զի և մէք գոնէ նորա գաղափարն ունենայինք : Մենք առաքեալներէն աւելի լաւ կը մտածենք , բայց առ աքեալներէն աւելի վատ կը գործենք : Ի՞նչպէս կը թուի քեզ մեր յառաջադիմութիւնն :

Հերմաս . — Զգուշացէք , բարեկամ , այնպէս կը թուի թէ կը զայրանաք : Գոհ պիտի լինելիք արդեօք , եթէ բոլորովին իրաւացի լինէիք : Կարելի է արդեօք , որ խսպառ իրաւացի լինիք : Ոչ ապաքէն այն ժամանակ խոնարհութիւնն մի լոկ բառ կը լինէր Յիսուս

Քրիստոսէն մէր քառարաններու մէջ  
աւելցած ։ Միթէ բնաւ խսնարհներ  
կամ հեղեր չը կա՞ն աշխարհի մէջ ։ Ե-  
թէ այդպէսէ ։ կը նշանակէ ։ որ բնաւ  
քրիստոնեայք չը կան ։ և ի՞նչ է Քրիս-  
տոնէութիւնն առանց քրիստոնէից ։

Ոնեսիմ ։ Զէ՞ որ առաջի, ձեզ յան-  
դիմաննելու ժամանակ, որ շուտով փո-  
խարէնն պիտի հատուցանէք ։ Այս,  
իրաւամբ կը յանդիմանէք զիս ։ Խմ-  
խօսքերս, իմ առաջներս շատ քայլար-  
ձակ են ։ Ի՞նչ որ տեսայ, տարակցոյ  
չը կայ, որ լու տեսայ եւ ահա նոյնն  
հաւատարմաբար յառաջ կը բերեմ ։  
Քայց ես վաս կը խօսիմ, երբ այնպիսի  
եղանակաւ կը խօսիմ, որ կ'ուղեմ հաս-  
կացնել ։ թէ նախապատութեան կամ  
առաջնութեան վէճն բոլոր քրիս-  
տոնէից գործ է առ հասարակ, և թէ՝  
հաւատոն տակաւին չէ խորտակած նո-  
ցա ամբարտաւանութեան եղիւրն ։  
Աչքիս առջեւ յանցանք մի կը տեսնեմ,  
որ թէ և հաղուագէս չէ, բայց և ոչ  
հանրական է ։ և նոյն յանցանքով զա-  
ռածուած քրիստոնեայքն, եթէ քրիս-  
տոնէայ են, շուտով կըզգան անշուշտ  
իրենց յանցանքն եւ սաստիկ կը կշտամ-  
բեն իրենց անձն ։ Սովու կը տարբե-  
րին նոքա ուրիշ մարդիկներէն ։ բայց  
ի հարկ է մի միայն սովաւ չէ որ կը  
տարբերին ։ Ես պիտի զգուշանամ ա-  
պերախտութենէ, ես չեմ ուրանար,  
այլ կը ճանաչեմ այն յաղթութիւննն  
զըր ամեն որ կը կատարէ Յիսուս Հոգ-  
ւով Արբով չերմեռանդն քրիստոնէից  
հոգւոյն մէջ ։ Աչ ամենուն և ոչ յատ-  
կապէս որ և իցէ միոյն կը վերաբերին  
մեր կարդացած պատմութեան հետե-  
ւեալ խօսքերն, զըր պիտի բայցարեմ ։  
Մերմել, դեւեր հանելէ և հալածելէ  
արդեւուլայն մարդիկն, որոնք մեղ հետ  
չեն հետեւիր Յիսուս Քրիստոսին, այ-  
սինքն ընդհանրական Եկեղեցւոյ հա-

զրդակցութենէն կորել, նաև քաղա-  
քական ընկերութենէն տարամերմել,  
նզովել և պատմել այն մարդիկն, որոնք  
քրիստոնեայ են, բայց մեղ նման քրիս-  
տոնեայ չեն, որոնք իրենց ձեւով և ոչ  
թէ մէր ձեւով աշխարհիս վերայ Յի-  
սուսի Քրիստոսի գործն կը գործեն,  
այս հալածանքով գրեթէ ամեն քրիս-  
տոնեայք կը հալածեն, մանաւանդ մեր  
ժամանակի քրիստոնեայք, որ մի յա-  
տուկ կերպիւ կը հալածեն, կը հալածեն  
և կըպարծին, կը հալածեն և պատիւ կը  
համարին ։ կը ցաւին, երբ անկարող կը  
լինին հալածել, կը կրկնեն, որչափ կտ-  
րող են, ոչ միայն յանդգնաբար իրենց  
անձն նախապատիւ կը համարին այն  
քրիստոնեայներէն, որք իրենց նման կը  
խոստովանին զջիսուս Քրիստոս մար-  
մավ եկեալ յախարհ ։ այլ և կը դա-  
տապարտեն, կը մերմեն ։ կըսպառեն  
իրենց բոլոր ոյժն ու զօրութիւնն, որ  
յաղթեն, անուանարկեն և կործանեն ։  
Եւ որ ամենէն զարմանալի է, Յիսուս  
ի Քրիստոսի թշնամիներն աւելի սի-  
րով կընդունին, նոցա հետ աւելի սի-  
րով կը վարուին, բան թէ Յիսուսի  
բարեկամաց հետ, որոնք դժբաղդա-  
բար, եթէ յանդգնութիւն չը համա-  
րուի ասել, նոյնպէս չեն հնչել այն  
Սուրբ անունն, ինչպէս իրենք կը հնչեն  
և կամ թէ տարբեր կերպիւ կը գրեն ։  
Ա.յն, այն, ամենայն անաշառութեամբ  
կ'ասեմ, որ շատ անդամ հալածողաց  
եւ հալածելոց մէջ եղած տարբերու-  
թիւնն ուրիշ բան չէ, եթէ ոչ երկու  
մատենագրի մէջ եղած ուղղագրական  
տարբերութեան նման մի բան ։ Եւ  
շատ ժամանակ այնպէս պատահած է,  
և սակաւ մնացած է, որ Եբրայական  
չէբօլէի (1) պատմութիւնն նորոգուի

(1) Եէբօլէի Եբրայական բառ է, որ հառ կը  
նշանակի ։ Դատաւորաց մէջ կը կարդանք, (ԺԲ. 6)

Եկեղեցւոյ մէջ ՚ի նախատինօք քրիստոնէից :

Հերման . — Այս ժամանակներն անցած են , և այսօր Եկեղեցւոյ մէջ տիրապետող ոգին հակառակ է նոյն ժամանակի ոգւցին :

Ովեսիմ . — Մի կարծէք թէ ես ըստիտեմ նոյն ժամանակի տարբերութիւնն եւ այն շնորհքն , որով Աստուածարտօնաւորած է մեր ժամանակն : Սակայն դառնութեան տրժատն տակաւին խլուած չէ . նա սոսկալի ոստեր կարձակէ հաւատացելոց հոգւց մէջ : Եւ մէք կարող չենք տակաւին իւր պարզութեամբ ընդունիլ և ՚ի խորոց որտէ կրկնել Առաքելոցն այս օրհնութեան խորքն . « Շնորհք ընդ ամենեօին , ոք սիրեն զՏէր մեր Յիշուա Քրիստոս անեղծութեամբ » . Եփս . Զ . 24 :

Իսկ ինչ որ կը վերաբերի այն առաջարկութեանն , զոր աշոկերով ամենայն աններողութեամբ , (դու առամոլեռանդութեամբ) համարձակեցան առաջարկելիրենց աստուածային Վարդապետին՝ մի այլ մոլեռանդութիւն (Աամարացւոց) պատմելու համար , որ աւելի ներելի էր քան իրենցն , այս մասին կը խոստովանիմ , որ նմանօրինակ բան գտած չեմ բնաւ ոչ մի քրիստոնէի բերանի կամ գրուածքի մէջ , քանզի անհնարին է զայս առնել և քրիստոնեայ համարուիլ : Օրհնեալ է Աստուած , մենք լաւ գիտենք՝ թէ Որոյ ոգոյ էնք , և ոչ մին մեզմէն կը պարձի

տեսնել շանթ եւ կայծակ ՚ի զլուխաթշամեաց Աստուածոյ : Թէ եւ այն տարբերութիւնն հին և նոր ժամանակներուն եւ պարտգաներուն կը պատկանի , բայց կան վայրիկեաններ , որ մէք եւս տիսուր ախոյեաններ կը լինիք նոցա , զորս կը դատապարաններ :

Ներեցէք , որ խօսքս ձեզ ուղղեմ : Դուք քաղցր բնաւորութիւն և բարեխառն բարք ունիք : Բայց եթէ երբէք տեսնէիք անիրաւութեան և չարութեան յազմանակներն եւ երկար յազմանակներն , խորհեցէք՝ թէ ի՞նչ կը զգացիք : Առաքելական պատուէրն , որ կը հրամայէ քրիստոնէից ընդ որով և ընդ խաչիւ՝ Բառաւալ զորոց յեռա ՚ի վեր առանց բարիութեան և երիմութեան . (Ա . Տիմ . Բ . 8.) պէտք է որ միշտ ձեր յիշողութեան մէջ լինէր և իմացնէր ձեզ որ աղօթէիք այս յանցաւոր երջանիկներու համար : Կը կատարէիք արդիօք այս պատուէրն . կը կատարէիք արդեօք ՚ի սրաէ : Կը խորհեիք արդեօք եւ ձեզ համար տիրող մասածութիւն կը շնէիք սոյն ճշմարտութիւնն , որ նոքա Աստուածոյ արդար տնտեսութեան ողբալի գործիքներն են , որովք թէ և զձեզ կը պատմէ , բայց իրենց բարեբաղդութեան հարուածով զիւրենք եւս կը պատմէ : Ի՞նչ զգացումներ կը մնուցանէիք : Ի՞նչ բաղձանքներ և բարեմաղմութիւններ կը յղանայիք : Ի՞նչով կը վկանայիք , ինչով կուրախանայիք : Ի՞նչ կը լինէր նիւթեան , ի՞նչ կը լինէր ներշնչութիւնն , վերջապէս ի՞նչ կը լինէր համն և աղն ձեր խօսակցութեանց : Հաղար անգամ չէիք ցանկանար . ինչ որ չէիք կարող պահանջել . եթէ առաքելոց հաւասար գիտութիւն ունենայիք եւ նոյն ժամանակին մէջ ապրէիք , ոչ ապաքէն ինչ որ ցանկայիք , ինչ որ ձեր մոքէն անցնէր նոյնն պիտի խնդրէիք , ինչպէս նո-

որ եր Գաղափացիք Եփրեմի հետ կը կռուէին , և յաղթելով Յորդանանու կիրճն գրաւած էին . պատերազմն աղատուած Եփրեմեանք եկին այն տեղն անցնելու , և թէ եւ ուրացան որ Եփրեմն անչեն . սակայն Գաղափացիք ըստովն կիրճն անց . նել , և որովհետեւ երկու կողման հաշւաններն կը տարբերէին ստիպեցին որ Եփրեմը հնչւն . Եփրեմեանք ըստ կարացին և Անբուել հնչեցին , ուստի և կոտորուեցան Գաղափացիքներէն .

քա ցոնկացան եւ խնդրեցին Սամա-  
րացիք կործանել։ Ա՛ւ պատասխանե-  
ցէք, եթէ կարող էք, շատ կ'ուրա-  
խանամ։ Թող միայն ես մեամ ամբաս-  
տանելոց աթոռակին վերայ։ քանզի  
մոքով ես նստայ նոյն աթոռակին վե-  
րայ և այնպէս շարունակեցի ձեզ հետ  
խօսակցութիւնս։ Սիրակցայ զձեղ նոյն  
աթոռին վերայ նստեցնելու համար։  
բայց միթէ միայն եմ ես, միթէ ըսկան  
ուրիշներ նոյն աթոռակին վերայ։ Նա-  
խանձն, ոին, բարկութիւնն, առե-  
լութիւնն, որ մարդասպանութիւն է,  
միթէ այդքան հազուադէպ են։ Մի-  
թէ Մարդասիրութիւնն այդքան հան-  
րացած է։ Միթէ մարմինն իսպառ  
յազմուած է։ Երանի՛ թէ, բայց ես  
հաւատացած չեմ այդ բանին, և տա-  
կաւին չեմ հաւատար, ինձ կը թուի,  
որ գեռ այն վայրկեանն եկած հասած  
չէ, որ քրիստոնէից մէջ այլ ես հարկ  
չը լինի յորդոր կարդալ ողբրմածու-  
թեան, բուրերարութեան և միջնոր-  
դութեան պարտոց վերայ։ Ես կը  
կարծեմ, ես կը զդամ, որ դառնու-  
թիւնն միշտ պատրաստ է զեղանիլ ՚ի  
սիրու մարդոց։ Սյն գառնութեան հո-  
տանքն կը վազէ այն հեղեղատէն, զոր  
կը փորէ ցասումն և սրտմուռթիւնն։  
Պէտք է երկար ժամանակ Յիսուսի  
Քրիստոսի գպրոցին եւ ընկերակցու-  
թեան մէջ գտնուիլ, պէտք է շատ  
քան ուսանիլ Յիսուսէն, որ մարդ կա-  
րողանայ շատ բան առ ոտն կոխել։  
Պէտք է, նորա մօտ նստած, խիստ  
քարձէն տեսնել այս կենաց շահերն  
ու յուղումներն, որպէս զի մարդ ըս-  
տողորի, ըս պատրի, այլ ատէ ցասումն  
ու սրտմուռթիւնն։ Փառք Աստուծոյ,  
մէք գիտենք՝ թէ որոց հոդոց ենք և  
թէ որով հոդուլ պարտինք լինիլ,  
Մենք գիտենք, որ իբրեւ քրիստոնեայ,  
բնաւ երբէք պէտք չէ որ ատենք։

Աշխատինք տւելի լու իմանալ այս  
պարտաւորութիւնն։ յաճախ մտա-  
ծենք սորա վերայ, զգուշանանք եւ  
զգուշացնենք զիրեար։ Խրատ կար-  
դանք միմանց, և խնդրենք Աստուծ-  
մէ, որ միայն կարողն է տալ. “Զգութ,  
զողորմութիւնն, զբաղըրութիւնն, ըդ-  
խոնարհութիւնն, զհեղութիւնն, զեր-  
կայնմտութիւնն։ Կողու. Գ. 12.



## Ք Ա Ն Ի Մ Ի

### Հ Ա Ր Յ Ց – Պ Ա Տ Ա Ս Ա Խ Ա Ն Ի

Հ. – Ինըն համար Ս. Յովհաննէս  
և իւր եղայրն Ս. Յակովլես Բաներէնէն  
կամ Որդիք որոտման կը կոչուին։

Պ. – Այն նախանձայուղութեան  
համար, որ հրաման խնդրեցին իրենց  
Վարդապէտէն կայծակ իջեցնել երկն-  
քէն Սամարացւոց վերայ, որոնք ըն-  
դունեցին մէր Փրկիչն։ Այս իրողու-  
թիւնն պատահեցաւ Պէտեկոսէէն  
առաջ, մինչդեռ Առաքեալք լնդու-  
նած չէին Հոգւոյն Սրբոց շնորհըն, ուս-  
տի և այս նախանձայուղութիւնն թէ և  
թիւր և սիսալ կ'երեւի, բայց աղնուա-  
բարուց զգացմունքէ յառաջդալն ան-  
տարակուսելի է։

Հ. – Քրիստոսի ծննդեան աւետիսն  
ինչըն պարզ և խոնարհ հավելներուն  
արուեցաւ և ոչ թէ պատուալ ու կրո-  
թութեամբ բարձր աստիճանի Հրէից։

Պ. – Վ ասն զի նոր Ծննդեան թեան  
բուն ոգին-այն է Աւետարանն քարո-  
զել աղքատաց-այս նախամեծար ընաւ-  
րութիւնն կը պահանջնէք։

Հ. - Ինչո՞ւ Բեթղեհէմանուան վերայ Եփրաթա անունն ես աւելցուածէ:

Պ. - Վասն զի քաջաբին հին անունն այս էր, որ Պալաբէր կը նշանակէ: Երբ Բեթղեհէմ անունն գործածուիլ սկսաւ, վերջին անունն եւս նորա վերայ աւելցաւ:

Հ. - Ինչո՞ւ մեր Փրկիչն եօթանասուն աշակերաներ ընտրեց:

Պ. - Ինչպէս որ Առաքելոց երկոտասան թիւն երկոտասան ցեղերութուցին համաձայն էր, թերեւս Եբրայեցւոց պատմական թիւն նկատելով՝ եօթանասուն թիւն ընտրած է. քանզի Ս. Գրոց մէջ կը գտնենք, որ Յակովը Եգիպտոս գնացած ժամանակ՝ իւր ընտանեաց անդամոց թիւն եօթանասուն էր: Մի և նոյն էր Մովսիսի կարգեալ ծերերուն թիւն: Մինիսորիսնն կամ Հրէից ազգային մէծ ժողովն բաց ՚ի նախագահէն և երկոտասեալութէն՝ եօթանասուն անդամներէ կը բաղկանար և նոյն ժամանակի Եբրայական կարծեաց համեմատ՝ երկիրն ինքնին եօթանասուն ազգերէ կը բաղկանար: Եօթանասուն աշակերտաց սրացոնն մի միայն նախապատրաստականն էր և այս մասին Աւետարանի մէջ եղած յիշատակութիւնն միայն երկոտառող է:

Հ. - Ի՞նչ Ռաբբի բառին նշանակութիւնն:

Պ. - Ռաբբի կը նշանակէ մէծն, զոր առաջնորդի կամ գլխաւորի խօսած ժամանակ գործ կը դնէին իրբեւ քաղաքավարական մակդիր: Ունի նաև Հարդապետ կամ ռասուցիւ բառի իմաստ: Օրինաց ուսուցիչներն կամ վարդապետներն թէ իրենց աշակերտներէն և թէ ժողովսդէն Ռաբբի ախտըռով: Յիսուս եւս թէ աշակերտներէն և թէ ժողովրդէն այսպէս կը կոչուէր: Ռաբբի բառին գերադաշ-

կանն է Ռաբբունի, որ աւելի քարձրպատուանուն էր և օրէնստացիներուն կը տրուէր: Յալշանու Աւետարանի մէջ (ի. 16.) սոյն բառն տրուած է Յիսուսօնին:

Հ. - Ի՞նչ կը նշանակէ Դրունչ Դըժուաց մի յաղթահարեսցեն (զեկեղեցին): Աւար. ԺԶ. 18:

Պ. - Դրունչ ասելով ընդհանրապէս Ս. Գրոց մէջ իշխանութիւն, կառավարութիւն կիմացուի: Ուստի ասելով Դրունչ Դժուաց մի յաղթահարեսցեն, կը նշանակէ թէ Եկեղեցին բնաւ սիրտի ջր յաղթուի, ջնջուի կամ վերջանայ, ինչպէս որ բոլոր սնապաշառութիւններն, թիւր վարդապետութիւններն, հալածանքներն, ջնջման հրավարտակներն, շարչարանքներն կարող չեղան և պիտի ջրկարենան բնաւ մահացյնել Եկեղեցին:

Հ. - Ի՞նչ կը նշանակէ Փականչ արայութեան, զոր տուաւ Յիսուս Պետրոսին:

Պ. - Փականչ բառն կը բացատրուի հետեւեալ հասուածներով. Նախ կը նշանակէ իշխանութիւն վարել, ինչպէս ասուած է Եղիակիմ Քեղիայի համար. “Եւ տաց զիւկանս Դաւթինմա. իշխացէ” . (Եսայի ԻԲ. 22:) Երրրորդ՝ կը նշանակէ աստուածային պատգամներն մեկնելու իշխանութիւն ունենալ: “Զի թաքուցանէր զիւկանս գիտութեան” . (Ղուկ. ԺԱ. 52:) Երրրորդ՝ Ս. Գրոց մէջ բայցապէտ ասելու տեղ՝ բանալ ասուած է. “Մինչ խօսէրն ընդ մեղ զճանապարհայն և որոպէս բանայր մեղ զգիրս ա. (Ղուկ. ԻՒ. 32:) Բաց յայսմանէ մի հրէական աւանդութիւն կայ, որ Օրէնքն ու Մարգարէններն բացատրելու իշխանութիւնն բանալի տալով կը նորհուէր: Սամուէլ անուն մի Ռաբբիի համար կը պատմուի թէ՝ երբ մեռաւ՝ բանալի-

ներին ու գրած տախտակներն դադաշըն մէջ զրին . քանզի իւր պաշտօնին նշանակներն (բանալիներն) ձգելուն համար զաւակի արժանացած չէր : Տարակյս ք կոյ , որ Պետրոսին փականք կամ քանալի տալն ուսուցանելու իշխանութիւն շնորհել կը նշանակէր , եւ սյօ նշանակութիւնն յետոյ պարզապէս կիքեց Յիառւս ասելով Առաքելոց . “Գնացէք , աշակերտեցէք զամենայն հեթանոսս , մղատեցէք , ուստցէք ու այլն :

Հ . — Ի՞նչ կը նշանակեն սոյն խօսքերն , որ Յիառւս ասաց Պետրոսին . “Յորժամ ծերասցիս , ձեռս ՚ի վեր կացես . և այլք ածցեն քեզ դօտի , և տարցին՝ ուր ոչն կամիցիս ո :

Պ . — Կը նշանակեն Պետրոսի մարտիրոսական մահն . քանզի Նրէից և Հառլ մայեցւոց մէջ յետեն վեր վերանել կը նշանակէր հպատակիլ , խոնարհիլ : Մենամրտութեան մէջ յաղթուողն իւր ձեռքերն վեր կը վերցնէր , որ նշան էր թէ կը խոնարհի իւր ախոյեանին : Յիսուսի խօսքերն սոյն սովորութեան ակնարկութեամբ են , որք կը նշանակեն թէ Պետրոս պիտի վարուի ՚ի մահ մարտիրոսական , պիտի հպատակի բարբարոսի դատավճարոյն :

Հ . — Ի՞նչո՞ւ համար գրամն կոմիտարտութիւնն Մամոնայ անդրաւոր-Աթան կը կոչուի :

Պ . — Մամոնա Ասորերէն է , որ հարբատութիւն կը նշանակէ , խակ անդրաւոր-Աթան կոչուելուն պատճառն է ցոյց տալ , որ հարատութեան անյագ սէրն առիթ է ամենայն չարեաց :

Հ . — Ի՞նչ կը նշանակէ , երբ կ'ասէ Յիսուս . “Ո՛ եւս արքից յայսմհետէ ՚ի բերոյ որթոյ մինչեւ ցօրն ցայն՝ յորժամ արքից զգա ընդ ձեզ նոր յարքայութեան Հղո իմոյ ո : (Մատ . ԺԶ . 29 : )

Պ . — Աստուծոյ արքայութիւնն , անմահութեան յաղթական թագաւորութիւնն Քրիստոսի մարմնառութեամբ սկսաւ և յարութեամբ լըրումն առաւ : Անմահութեան թագաւորութիւնն Քրիստոսի յարութեան վերայ հիմնուեցաւ . ուստի երբ Յիսուս կ'ասէ թէ՝ Գինի պիտի խմեմ ձեզ հետ արքայութեան մէջ ք նշանակէր թէ պիտի խմել յետ տիեզերական դատաստանին , (ինչպէս ումանք սխալմամբ կը կարծեն) այլ հետ յարութեան : Եւ արդարեւ կը տեսնենք որ կատարած է Յիսուս իւր խօսքն , ինչպէս և գրուած է ՚ի Գործս Առաքելոց . “Որք և կերաք և արքաք ընդ նմա՝ յետ յարութեան նորա ՚ի մեռելոց ” . (Գործ . Ժ . 41 : )

## ԵՐԵՄԻՍ. ՄԱՐԳԱՐԵ

ԱՅՍ մարդարէին անունը ամբարյալ կամ յԱսոր-ծոյ կամ յԱսոր-ծոյ կարգեալ կը նշանակէ : Ասիկայ Յենիամինի Երկրին մէջ եղած Անաթովլթայ բնիկ Քեղիկ տա Քահանային որդին էր : Երեմիայ շատ փոքր էր Երբ Տիրովը խօսքը առաջին անգամ եկաւ իրեն : (Երեմ . Ա . 6) : Այս գէպը Յավսիա թագաւորին Երեքտասաներորդ տարին տեղի ունեցաւ (Ն . Ք . 629) Երբ տակաւին Երիտասարդ մարդարէն Անաթովլթի մէջ կը բնակէր : Կերեւի թէ իւր բնիկ Երկրին մէջ շատ տարիներ մնաց , սակայն հուսկ ուրեմն իւր Երկրացւոց և նոյն խոկ իւր ընտանեաց հարստահարութիւններէն աղատելու համար ինչ-

ողէս նաեւ իւր աշխատութեանցը և  
ճգանցը համար աւելի ընդարձակ  
ասպարէզ մը գտնելու համար Երու-  
սաղէմգնաց : Յովսիա թագաւորը Ե-  
րեմիայէնքաջալերուած սկսաւ բազմա-  
թիւ բարեկարգութիւններ ընել, ա-  
նիկա անտառները և կուռքերը խոր-  
տակելով Ճմարիտ Աստուծոյ Երկրպա-  
գութիւնը վերահաստատեց : Հրամա-  
յեց Տաճարը ընդարձակօրէն նորոգել  
և այն ստակը, որ Քահանայք ապօրի-  
նապէս իրենց պիտոյիցը սեփականած  
էին, գործաւորներուն տալու հրաման  
ըրաւ : Այս նորոգութեան յառաջա-  
դիմութեան ատեն տաճարին մէջ Մով-  
սիաի օրինաց մէկ օրինակը գտնուեցաւ  
Քեղիկաս քահանային և Սափան դըպ-  
րին ձեռօք, զոր Երեմիա Յովսիասի բե-  
րաւ : Այս օրինաց ընթերցումը ըդ-  
թագաւորը խիստ շարժեց՝ որուն վո-  
րայ ջանաց անոր տուած պատուի-  
րանքները իւր խստապարանոց ժո-  
ղովրդեան պահել տալու : Ասոր ազ-  
գեցութիւնը ինչ որ ալ եղած ըլլայ,  
կարձատեւ եղաւ եւ Յովսիայի մահ-  
ուամըը բոլորութին մոռցուեցաւ : Իրեն  
յաջորդող Յովսիկիմ թագաւորը աար-  
քեր բնութեան տէր մէին էր : Աթո-  
ւը բարձրանալը դեռ քանի մի օր ե-  
ղած էր, երբ ուրացող քահանաները  
եւ ժողովուրդը վերեմիան բռնելու  
յանդգնեցան և զայն դատարաններու  
առջեւ քորչելով սկսան անոր արիւնը  
պահանջել փոխադրած այն քարոզու-  
թեանց՝ որնոր իրը Եհովայի մարդարէ  
մը ճանուցանելու կարգուած էր :

Սակայն կերեւի թէ աւելի թա-  
գաւորին մէկ երկու խորհրդականաց  
անձնական աղքեցութեամբն էր, որ  
իւր կեանքը ազատեցաւ, քանի թէ թա-  
գաւորին Երեմիայի վրայ ունեցած որ  
և իցէ նպաստաւոր զգացմամբը : Բան-  
ալ նետուեցաւ կամ ինչորէս որ ինքը

կ'ըսէ (Երեմ. ԱԱ. 5.) Ի խըլն դըր-  
ուեցաւ և իւր քարտղները կամ աղդաւ-  
րարութիւնները փոխանորդի մը միջո-  
ցաւ պարտաւորեցաւ շարունակել .  
Այս գտած փոխանորդը Բարուք մար-  
դարէն էր՝ որ Երեմիայի բերնէն առած  
մարդարէութիւնները գրեց և ծոմի ո-  
րը աներկիւղութեամբ հրապարակաւ  
կը կարգար Հրէից : Սակայն Բարուքի  
ընթացքը Յովսիկիմ թագաւորին բար-  
կութիւնը շատ գրգռեց, և Երեմիա  
որ իւր ազատութիւնը նոր ստացած  
էր՝ իւր դողբին հետ պահուածելու խը-  
րատուեցան :

Երեմիայի գրածները՝ զօրս Բարուք  
հապարակաւ կը կարգար, թագաւորը  
յափշտակելով հրապարակաւ այլ եց,  
որ այս պարագային վրայ Սուրբ Գիւքը  
կաւեցնէ « Եւ ոչ խնդրեցին և ոչ պա-  
տառեցնին զգատմուանս իւրեանց թա-  
գաւորին և ամենայն ծառ այլք իւր ո .  
Պատճառը վասն զի իրենց սիրաը կարծ-  
րացած էր : Հետեւեալ տարին Նա-  
բուգողոնոսոր իւր բանակովը եկաւ  
և Յովսիկիմ բերդին պարսպապահ զօ-  
րաց առաջնորդած ատենը իւր կեանքը  
կորսնցաւ, և իւր մեռեալ մարմինը  
Երեմիայի նախագուշակութեանը հա-  
մաձայն «Անկեալ ՚ի տօմէ ՚ի տօմէն  
գիշերի ՚ի ցաւրտ ո .

Նաբուգողոնոսորի ներքեւ Ասո-  
րեստանցւոց բանակը Եգիպտացւոց  
կողմէ խափանուելով Հրէաստանէն ետ  
քաշուեցաւ, բայց երեք ամիսէն նորէն  
վերադարձաւ : Միւնցին ատեն նախորդ  
Յովսիկիմ թագաւորի որդին թագաւոր  
հրատարակուեցաւ, սակայն անմիջապէս  
Ասորեստանցւոց հալատակեցաւ և ընդ-  
դէմ իրեն կամոցը Նաբուգողոնոսոր  
զինքը իշխանութենէ վար առնելով իւր  
եղայրը զԱնդեկիաս թագաւորեցուց :  
Երուսաղէմի գլխաւոր բնակիչները հի-  
մա Բաբելոն կըստարուին և եօթանաս-

նամեայ գելութիւնը կ'սկսի : Հրէայք ընկճեալ և ակտրացեալ ըլլալին կ'ըդ գան , այսու ամենայնիւ իրենց հպարտութիւնը զեռ եւս չեր խորտակուած և իրենք զիրենք բաքելոնի հպատակ տեսնիլը չեն իրնար տանիլ : Ապա տարբութիւն մը կը խորհրդածուի և Երեմիայի խորհուրդ կը հարցուի իմանալու համար թէ այս ապստամբութիւնը ի՞նչ վախճան պիտի ունենար : Մարդարէն յաջողութիւն չ'գտնելին կ'իմացնէ , բայց կը պատուիրէ անոնց որ Աստուծոյ դիմաց զիրենք իրնարհեցը նեն : Այս խորհուրդը իրր անարդանիք մի կը սեպուի և Երեմիա իրը մոտիչը մը նիստուելով բանտ կը դրուի :

Այս միջոցներս անցք մի կը պատահ որն որ Երբայեցի թագաւորին և ժողովսկեան բնութիւնը կը բացացացածէ : Ապստամբութենէն առաջ Սեգեկիաս իւր քաղաքական վախճանին կրօնական կերպարանիք մի տալըւ դիտմամբ Աստուծոյ օգինացը պատկառ մնալու համար հանդիսական ուխտ կը նէ և իշխանները ևս պարտքի պատճառաւ իրենց գերի եղող եղայրները ազատ կը նեն : Եգիպտացւոց թագաւորը Սեգեկիասի հետ գաղտնի դաշնաւորութեամբ մի Ասորեստանցւոց բանակին դէմ ելաւ , որուն պատճառաւ խիստ քիչ ժամանակի համար Նաբուգոդոնոսոր Երուսաղէմի պաշարումը կը վերցնէ : Սեգեկիաս ասոր վրայ վատահանալով թէ ասորեստանցիք բնաւ չի պիտի վերադառնան և կարծելով թէ ինքը և իւր ժողովուրդը ալ վատանդի ենթակայ չեն գտնուիր , իրենց ազատ ըրած որարտապանները բռնեցին և իրեց բոլոր խօստաւմները և ուխտերը դրժեցին : Անտարակայս թշնամին կը վերադառնայ և երբ կը տեսնեն որ դարձեալ Նաբուգոդոնոսոր իրենց վրայ կիշմէր չկրցան ուրիշ

կերպիւ մաքղնիքնին մսիթարել , բայց եթէ զնրեմիան գուբի մէջ նետելու հրամացելով՝ որպէս զի անօմթութենէ մեռնի : Սեգեկիասի վախճանը յայտնի է : Սեգեկիաս Բաբելոն գերի կերթայ , ուր իւր երկու որդւոցը գըլ խատումը տեսնելու դատապարտուելուն վերջը ինքն ալ գլխատուելով կը մեռնի ՚ի Բաբելոն Ք . — Ա . 580 :

Սեգեկիասի վճռէն զատ Երեմիա իւր բոլոր ամենաախութ նախագուշակութեանցը ցաւսլի կատարումը տեսնելու համար կենդանի մնաց : Անիկա սովին զարհութելի հետեւանքներուն ականատես եղաւ , և երբ սովոր գործը լմացաց տեսաւ նաեւ թշնամյն յաղթութիւնը : Անիկայ Սիօնին ամրութիւններուն կործանաւմը , Սովորմնի պալատին , Աստուծոյ տաճարին բոլոր չենքերովը հանդերձ և անոր կեդարի կամ անփուա փայտէ և ուկիէ ձեղուններուն գետնահաւասար աւր աւերմանը կամ բացաձարակ ըլլալուն և պիղծ ձեռքերէ սրբազնի անօթներուն և հանդերձներուն յափլատակմանը վկայ հանդիսացաւ : Այս սարսափելի յեղափոխութեանց միջոցին հայրենասէր և կրօնասէր Հրէայի մը զգացումները ինչ որ էին , անիկայ իւր աննման եղերեգութեանցը և ողբոցը մէջ արձանագրած ձգեց , որոնք սրտառուչ բանաստեղծութեան հետ պատմութեան Ճշմարտութիւնը կը միացնեն :

Երաւանակէմի վրայ Աստուծոյ բերած դատաստանաւը Երեմիայի նախագուշակութիւնները կատարուելով Ճշմարտուեցան , որով եւ մնացած ժողովուրդը Երեմիայի քով ժողովեցան խորհուրդ հարցնելու համար թէ արդեօք Հրէաստանի մէջ մնան , թէ Եգիպտոս Երթան և Երեմիան Աստուծոյ կողմանէ պատասխանեց թէ ,

Հրէաստանի մէջ Քաղցէացւոց հպատակութեանն ներքեւ խաղաղութեամբ նստողը իւր կեանքը պիտի ազատէր, սակայն Եգիպտոս գնացողները Քաղցէացւոց սրովը պիտի մեռնէին հոն : Ժողովուրդը այս պատասխանը առնելուն նորէն զինքը իշր մասնիչ ամբաստանեցին և որոշեցին զԵրեմիան հետեւնին առնելով Եգիպտոս երթալ: Եգիպտոսի մէջ Երեմիա իւր քարոզները և աղջարարութիւնները նորոգելու աղջէկ առիթ ունեցաւ : Անիկայ հոն ցրուած հրէաները կուապաշտից ամեն տեսակ պղծութեանցը և ապականութեանցը մասնակցած տեսնելով, անմիջապէս Աստուծոց բարկութիւնը ծանօթացոց, Երենցպատասխանին ընդհանուր միտքը իրենց բուն իօսքերով կը կընանք յառաջքերել . “Սուտ խօսիս գու . ոչ առաքեաց զքեզ Տէր Աստուած մէրո : Ասով մարդարէին պաշտօնը վերջացաւ : Կերեւի թէ Եղիպտոսի գերութեան միջոցին անիկայ սրբամին ցաւէն մեռած ըլլայ :

Երեմիա մարդարէն յառաջադցն ծանուցած մարդարէութիւններուն կատարմանցը վրայ սրտառուչ եղերեգական եղանանակաւ մի կողքայ :

Երեմիայի ողբքը տաղաչափութեամբ գրուած էին բոլորն ալ միւնիոյն նիւթի վրայ, եղերերգական ձայնի կամ մեռնելուկան եղերերգութեան դրութեամբ շարագրուած, եւ մարդարէին մտաց մէջ ծնածին պէս ըստած և դրուած են և անմիջապէս վերջը հիմակ տեսածնուունման կարգաւորուած : Ողբքը բնականապէս հինգ մասի բաժնուած են, որոնց իւրաքանչիւրը որոշ ողբքերդութիւններ են . քսան երկու պարսկերութիւններէ բաղկացեալ եփայական այբուբենին տառերուն պատասխանելով : Առաջին չորս ողբքերդութեան մէջ իւրաքանչիւր պարբերութիւննե-

րը այբուբենական կարգաւ տառերը իրարույաջորդելով կ'սկսին ոտոնաւուրի ձեւով : Առաջին, երկրորդ և չորրորդ ողբքերուն մէջ Երեմիա ժողովը գետեան իբր մէկ անձ կամ մարմին կը խօսի կամ զԵրուսաղէմ կ'անձնաւորէ, և այս քաղաքը իբր մասնաւոր բնութեան աէր մը կը ներկայացնէ : Երրորդ մասը կը կարծուի որ խումբ մը Հրէայ երգիչներէ արտասանուած ըլլան, իրենց առաջնորդովը ներկայացած : Եւ հինգերորդ մասը Հրէից ամբողջ աղջը գերութեան տարուած ատենին իրենց միացեալ բողոքները տռաջի ամենակարսղ Աստուծոյն կը հեղուն : Երեմիայի ողբքը Յուդայի թագաւորութեան կործանումէն վերջը գրուեցան :

Ի Արքմանութեան ,  
Յ . Տամիամէան :

Երեմիա Մարդարէի սոյն կենսագրութիւնն հրատարակելով՝ հարկ կը համարիմք յայտնել թէ՝ Օ միւռնի ացի Յ . Տամկամէան աշխուաբարոյ և քրիստոսակէր երիտասարդն, որ Անդլայէն ՚ի Ա . Ամոռս գալով և իւր տրկարութեան սաստկանալուն առթիւ իւր հայրենիքն դառնալով առ Տէր փոխեցաւ, թողած է Ա . Ամոռոցս մէջ քանի մի կրօնական աշխատութիւններ, որոնք մերթ ընդ մէրթ կը հրատարակուին իբր անեղծ միշատակ իւր կրօնասիրութեան և անդուլ աշխատութեան :



# ԵՍ ԱԼ ՀԱՅ ԵՄ

ՆԱՅ եմ աղքատ՝ պարծիս յասել, առ ի՞նչ եղացը .  
Ե՞ւ ալ հայ, եւեթ անուամբ . ոչ խկաբար .  
Եթէ հայ ես, հայոց պարտիս՝ մայն որերաց,  
Օքնթացո ունիլ, եւ ըստ նոցին, գնալ հետոց :

Հայ քաջազուեթ, յամբիծ սրտի . սուրբ զգացմանց .  
Ենաի դրդեալ, մահուն արբին՝ ընդ հայրենեաց .  
Իսկ ՚ի քեզ հայդ, ոչ սէր զիաեմ, ընդ հայութեան,  
Եւ ընդ այնր՝ հայոց քանդիչ լինել ջանաս :

Հայք հայասերք, հայոց սակս . զերկունս բազում .  
Յանձնառեալ ՚ի զերծ ժանեաց՝ հայս ՚ի գայլուն .  
Դու ալ հայ ես՝ ցոյց հայութեանդ՝ յայտնի նշան .  
Ի դութ անկեղծ՝ ընդ հայրենիսդ, զիւցազնական :

Գոն հայ որդիք՝ յարդեան դարու, զոհողք անձանց ,  
Եղբիս ՚ի շուք, ընչիւք հանդերձ, սէր յաննախանձ .  
Դու ալ հայ ես՝ քեզ չէ օրէն նոցին սարաս ,  
Դատադութել ազգիդ պատիւն՝ ըստ քոյց կարեաց :

Արին Վարդան՝ հայոց ՚ի պէտս, Ետրովպէին .  
Վատնեաց զանձն ՚ի կենախուզ՝ սայր մլրատին .  
Դու եւ նորին, ՚ի սերնդոց, շառաւիղեալ ,  
Շնդէր խուսիս . յորժամ ազգիդ արկածք զիպէն .

Եւ . Տագրաբռնեան  
ՈՒմառնեցի :

# Խ Ը Ա Խ Ո Յ Ս

**Վ**եչից ծնունդք՝ Հայք գիւցազունք՝ հերիք հնջկք ,  
Ա եր ընդոստնուլ ժամե արդէն՝ 'ի խոր քնոյ .  
Դոչէ Մասիս՝ եռանդաշարժ՝ ձայնիւ , ելքք ,  
Վ արդանք ծնան , Հայաստանի , 'ի մօք ծոցոյ :

**Գ**րաւականք , անզցդ քաջին՝ մցն զգացմանց ,  
Ո ր զմահուն՝ էարբ բաժակ՝ 'ի գոռ մարտին .  
Ե սրուն սարաս՝ աներիեւան . անձանց ունին .  
Ա նցետագարձ՝ յաղիլ՝ 'ի պէտս տան հայրենեաց :

**Գ**րաջագտնգուր՝ հայազաւակք , յայտմհեաէ ,  
Օ ափս՝ 'ի ժպիտ՝ զոտո ՚ի թինդ , հարցեն անդուլ .  
Չ իւնք հնօրեայք՝ անհետացան՝ 'ի Մասեաց լեռնէ ,  
Վ արդից բուրեալ , անդ հոտ չքնառ , օր ըստ օրէ :

**Ե**'կ կախեսցուք , շլորշ զուլսնց ծիրաներփեան ,  
Ի նիշ արեամբ , ցմահ ջանից , ընդ հայրենեաց .  
Ի քաջալերս , սրտաբեկեալ որդւոց հայկեան .  
Ո րբ միշտ հեղուն . ձեռն՝ 'ի ծնօտի գետ արտասուաց :

**Ա**զէ՛ եցուք՝ 'ի յասպարէզ , սպառազէն .  
Ա յուսերամերկ , շկահելով՝ կուռ Վ ահանաց .  
Ո մող սուսերաց , կափիլ անդէն , շողք զօրեսցէն .  
Օ ականողիս՝ ազգագրուժ ովսերիմաց :

Կ. Բ. Ո.

# ՈՂԲՔ ՀԱՅԿՈՒՀԻՈՅՆ

**ԱՀԱ** լուսին յետուստ լերինն Վարագայ  
Ծիրանեփառ իբր ըզդշոյ նազեալ գայ .  
Շուրջ ըզնովաւ բոյլք աստեղաց բոլորին  
Լուսադողդոջ ՚ի կայթ յալս եթերին .  
Ծաղիկն հովտին ընդ իւր տարփիցն անուշոկ  
Զանմահականն ըմպէ զցօղոյն մատրուսակ .  
Ժամ հանդարտիկ , յոր ՚ի հաւաչս զեփիւռին  
Բնութիւն համայն խայտայ սիրով կենաածին :  
Ուր հոգւոյս իցէ հատոր տարփել .  
Ուր սրտիս միակ իմ սէր ցանկալի . . . .  
Բաբէ յարիւն ներկան բոսոր  
Աչացս աղքերք գետայորդոր ,

Ու արտալածիկ յիմ սիրոյն  
Լուր մի չառի ես համբուն . . . .

**Այեանց մահաբոցք**  
Իցէ արդեօք կուր ,  
Թէ փոթորկաց  
Խաւարազգեաց :

**Աւազ** ժամուն յոր թող նոտ զտունն հայրենի ,  
Աւազ եթող և ընդ նմին զիս այրի .  
Ասաց երթալ պանդիտակցել իւր եղբարց  
Եւ բնաւ անդուստ ՚ի գիրկ սիրոյն չարար դարձ .  
Ընդ առտեղօք օտարութեան դժընդակ  
Ըզսոլ մահուն էարք ըզդառն ըզքամակ .  
Եւ հիմ թողի զնա երթալ միայնակ  
Դէյթ փակէի անձամբ դաշկունս գեղօրակ . . . .

Օ՞ն անդր ՚ի բաց , օ՞ն տատեղք և ծաղկունք ,  
Օ՞ն անդր ՚ի բաց , լցու և խունկք անուշունք ,  
Փաւ ինձ երգոց ձայնք զուարթարար ,  
Տրտում հոգիս է մինչ իսպառ ,

Զիանդ զուգել զմահ ընդ կեանս  
Եւ զթախիծ ընդ հրձուանս :

**Մի էր սրտիս յոյս**  
**Մի իմ աչաց լցու**  
Որ ելիք զիս  
Ցիմ առայդ տիս :

**Աստուած** իմ և իբր կարիցեմ հանդուրժել  
Դառն աղէտիցս յար զմիմեամբք ել և ել .  
Երկուց ասսանց այն ինչ գարունք շնորհունակ  
ՊՃնեալ ՚ի գեղ զանտիականն իմ հասակ ,  
Եւ մաշեցայց անժամ՝ ողբովք ցաւալից  
Զերթ զծաղկ յարփւոյն թառամ ճաճանչից . . .  
**Այլ** հիմ տուաւ լցո ականողեաց թշուառին  
Եւ իեանք որոց սիրտք հեծեծեն տիրագին . . .

**ԱՇ**, մ՛ս լսեն տէր ապաստան որբոց ,  
Զիմ սրտիս լսեն աղաղակ ողբոց . . .  
**Լոեմ**, լսեմ ես ըզօսիւն  
Տէրեւաթափ աշնան հողմոյն ,  
Որ սաւառնի շուրջ զինեւ  
Իբրո զուարթնեակ լուսաթեւ ,  
**Արկանել** ՚ի խոր  
Զիս ՚ի մահուն ձոր ,  
Զինչ աղաղուն  
Տէրեւ ծառոյն . . . :

**Այլ** ամի՞ օն անդր ՚ի բաց խորհուրդ ցնորակոծ . . .  
Կայծ իմ սրտիս Տէր կայծ մաղթեմ կենսաբոց .  
Զբնչ թէ մեռայց լիցի մանկիկս իմ սիրուն ,  
Ո՞ յետ մահուս գտուեսցէ զնա ինձ հանգոյն . . .  
Ո՞լ փափկագեղ զուարթուն այտիւք վառ ՚ի լառ ,  
Նախախայրի պատուղ սիրոյս խանդավառ ,  
Որ աղէտիցդ անգէտ ժպտիս գեղաշնորհ ,  
Ե՞կ և հանգիր վերայ սրտիս իմ անզօր .

**Ե՞ս** խանդակաթ մայր նոյն և եղեց հայր ,  
Ի քսին սուրբ սէր կեցից ես՝ յամայր .  
Եւ զիմ գորտով մայրենի  
Տաց քեղ մնունդ քաղցուենի :

**Իցիւ թէ խորշակ**  
Պահէր զբոյդ հասակ  
Ի խաղս առուաց  
Անբիծ կենաց :

Ա. - Եպիս Կարապետեան Կ. Պօլեցի  
Ալակ. Ժառան. Վարժարանի :

Զ Ա. Ր Զ Ա. Ր Ա. Ն Ք

ՆԱԽԿԻՆ ԳՐԻՍՏՈՆԵՒԹ

Հին սովորութիւն մըն էր զինուոր ներու, փախատականներու և ծառայ ներու մարմիններուն վերայ շանթիւ յատուկ և որոշ կամ բացայտ նշաններ դրոշմելը: Անտարակոյս Սուրբն Պօղոսի Գաղատացւոց Զ. գլուխ 17 համարին մէջ ըստած ակնարկութիւնը (Զշարքարանն Քրիստոսի ՚ի մարմնի իմում կը րեմ) ասոր վրայ է: Սակայն Քրիստոսի ծառայիցը կուապաշտ գատաւորներէն ընդունած դրոշմներու նկատմամբ լաւ կ'ըլլայ խորհրդածել թէ անոնք ինչ տեսակ չարչարանքներ էին: Ֆօքս իւր ադորձ և Արյանագրո-թիւնու գրքին մէջ Աւետարանի նախին քարոզգացը վրայ խօսելով՝ Եւսէքիսէն և սուրբ Օգոստինուսէն, սուրբ Հերոնիմոսէն և ուրիշներէն յառաջ բերելով կ'ըսէ:

Ամանք սրով խողխողուեցան, ոմանք կրակով այրիմեցան, ոմանք խարազանաւ գանակոծուեցան, ոմանք երկաթեայ ձանկերավլ վիրաւորուեցան, ոմանք կամ կախաղանի վրայ գամուեցան, ոմանք ծովերու մէջ խեղդուեցան, ոմանց կաշին քերուեցաւ, ոմանց լեզուն կը արուեցաւ, ոմանք ՚ի մահ քարկոծուեցան, ոմանք ցրտով սպաննուեցան, ոմանք սովամահ մեռան, ոմանց ձեռքերը կորուեցան կամ ուրիշ կերպով անդամահատուելով աշխարհիս առականացը և խայտառակութեանը համար մերկ ձգուեցան: Սակայն այս բռնաւորները և սատանային այս բան որոները այս կերպով սպաննելով կեանքը մարմիններ բաժնելուն դեռ չեին բաւականացած ո: Սպանման տեսակները զանազան էին, այսու ամենայնիւ այս տեսակները իրարմէ նուազ սոսկով

չին: Ինչոր մարդկային անգիւթութիւնը կամ բարբարատութիւնը մարդուս մարմինը տանջելու գիւտ մը կամ հընարք մը կարողէր հնարելու Քրիստունից գէմ կը գործադրուէր, ինչպէս որ վերը մասսամբ մը միշտած է անկէց աւելին պիտի երեւին Գաղղիոյ մէջ գտնուած եղբայրներուն ղըկած նամակին մէջ, որ հետեւեալ կերպով է: «Նենգութեամբ և խորամանկութեամբ թշնամեաց գոռում դովիւններով, գանակոծութեամբք, խեղդմամբ, պատառելով, քարկոծումներով, հրաշէկ երկամէ տախտակներ վրանին դնելով, խորին զնտաններու մէջ տանջանաց մեքենաններով՝ բանտերու մէջ խեղդելով, վայրենի անամնաց ակռաններով, կախաղաններով, կախաղաններով կամ ցիցերով, ցուլերուն եղջիւրներուն վրայ նետելով սպաննելուն եաբը՝ մարմիննին աղքերու վերայ կը նետուէր և զանոնք պահպաննելու համար որպէս զի մարդ մը գալավլ զանոնք ըթաղէ, շուներու կը ձգուէր, ոչ ալ զանոնք թաղելու համար աղաշանք մը կ'ընդունուէր »:

Արբայն Պօղոսի իր թուղթը գրած ատեներ իրական մահէ քիչ պակաս եղած այս չարչարանաց մասնակից զըտնուիլը՝ առ Կորնթացիս գրած Երկրորդ թղթին մէտասաններորդ գլուխն բացայսոյտ կը տեսնուի, ուր կ'ըսէ: «Պաշտօնեայք Քրիստոսի իցեն, յանդգնագոյնս ասացից՝ թէ առաւել եւս ես, եթէ վաստակօք առաւել, եթէ գանիւք՝ եւս առաւել, եթէ բանսիւ աւելիք քան զնտաս, եթէ մահուամբք բաղում անգամ, ՚ի Հեկլոյ հնգիցո քառասուն միով պակաս արբի, Երկրը ցըս ձաղկեցայ, մի անգամ քարկոծ եղէ, երիցս նաւակոծ եղէ, զոիւ և գգիւեր յանդունդս տառապեցայ: Ի ճանապարհո բաղլում անգամ, վիշտու

՚ի գետոց, վիշտս յաւազակաց, վիշտս յազգէ, վիշտս ՚ի հեթանոսաց, վիշտս ՚ի քաղաքի, վիշտս յանապատի, վիշտս ՚ի ծովու, փիշտս ՚ի սուտ եղբարց: ՚ի սպահու՝ և ՚ի վաստակո, ՚ի տքնութիւնս բաղրւմ անդամ, ՚ի քաղց և ՚ի ծարաւ, ՚ի սպահու բաղրւմ անդամ, ՚ի ցուրտ և ՚ի մերկութիւն և այլն և այլն:

Հռովմայեցի դատաւորի մը առջեւ բերուած Քրիստոնեայ բանտարկելց մը դատասաանը գրեթէ հետեւեալ կերպիւ կ'ըլլար: Այս նկարագրութիւնը զանազան աղքիւրներէ քաղուած է:

Դատաւորները դատաւորական աթոռներու վրայ կը նստէին և տասնաւ պետներէն մէկը ծայրերը ծիրանի ժապաւէնով ձերմակ շրջադրեստներ հագած աթոռակալութիւն կ'ընէր, ետեւը իրնութիւնները կը կենացին: Դատարանին դրսնը մօտ տանչանաց գործիները դրուած կ'ըլլային, որպէս զի բանտարկեալը առջի անդամ ներս մտած ատենը տեսնէ: Այս գործիներուն մէջընէին պարանոցի համոր ծանր լուծը որ կամ երկաթէ և կամ փայտէ էին, Զինասաանի մէջ խնդր կոչուածին նըման, ոտնակապ շվթաները, այն տախտակէ դատատակիները կամ կոճղերը, ոքուն մէջ ձեռքերը և ոսքերը իրարմէ այնշափ հեռու կը քաշուէին և կը պըր կուէին, որ մարմնոյ յօդուածները կը խախտէր կամ կը խէր: Ասոնց մէջ կոյին նաև փշեղէն դաւազաններ, խարտզաններ, երկաթեայ և կապարեայ չափականի մէջ կը լուծը մտած մէջ կը նետուէր. ետքէն տանջանարանին վերայ կը ձգուէր կամ ուրիշ կերպով մը կը տանջուէր, և հուսկ յետոյ կը գլխատուէր կամ գտղաններու առջեւ կը նետուէր, և գլխատուած ատենը մարմինը շունչը մը պիտի ըլլար դատապարտութեան վճիռ կը տրուէր, բայց չէ թէ անմիջապէս մաւհուան, վասն զի այնպիսի մահ մը խիստ մէծ շնորհը մը պիտի ըլլար դատապարտելցն. հասպ դանդաղ և յամրացայ մահ մը: Նախ դատապարտեալ գարշելի ըսուած տեսակ մը բանտի մէջ կը նետուէր. ետքէն տանջանարանին վերայ կը ձգուէր կամ ուրիշ կերպով մը կը տանջուէր, և հուսկ յետոյ կը գլխատուէր կամ գտղաններու առջեւ կը նետուէր, և գլխատուած ատենը մարմինը շուներուն կը ձգուէր: Նախնի Քրիստոնէից մէծ մասին տարած մահուան կերպը Եկեղեցական պատմիներուն, մասնաւորապէս Եւսէբիոսի, այնչափ ընդարձակօրէն ըրած նկարագրութիներէն իրեւոյ իմացուիլ:

որուն վրայ նրով լեցուն կաթսայ մը շշելով և սուլելով կեռար:

Քրիստոնեայ ամրասաանեալը հեմայներս կը բերուէր, և այսպիսի տեղ մը իր սոսկալի գործիքներով և կարասեօք բաւական էր աներկիւղ սիրտ մը ահաբեկելու: Կը հարցուէր թէ Դու Քրիստոնեայ մըն ես. Ահա ասոր պատասխանին վերայ ամեն բան կը կայանար: Եթէ հաստատական պատասխան մը տար, կը խրատուէր որ իբր հպատակ կայսրութեան չաստուածներուն և երկեային կայսեր ունեցած իր պարտաւորութիւնը յիշէ, յիմար առարկութիւնները ՚ի բաց թողու, նաև զովեցւոյ յիմարութիւնը ուրանայ և մերժէ և ըստ օրինաց կայսերաց ուղւոց զոհէ: Պատրաստուած սեղան մը կար, բաց մը տրդէն կը վառէր, խունկ կայրէր, քուրմերը կեցած կը ըստակէին, եթէ կանցուէին և զոհը կաատարուէր, ամեն բան կ'աւարտէր, բանտարկեալը կ'արձակուէր և նյանիսկ տէրութիւնէն կը մէծարուէր: Խոկ եթէ դաւանութեանը վերայ հասաատ կենացով պնդէր՝ անմիջապէս դատապարտութեան վճիռ կը տրուէր, բայց չէ թէ անմիջապէս մաւհուան, վասն զի այնպիսի մահ մը խիստ մէծ շնորհը մը պիտի ըլլար դատապարտելցն. հասպ դանդաղ և յամրացայ մահ մը: Նախ դատապարտեալ գարշելի ըսուած տեսակ մը բանտի մէջ կը նետուէր. ետքէն տանջանարանին վերայ կը ձգուէր կամ ուրիշ կերպով մը կը տանջուէր, և հուսկ յետոյ կը գլխատուէր կամ գտղաններու առջեւ կը նետուէր, և գլխատուած ատենը մարմինը շուներուն կը ձգուէր: Նախնի Քրիստոնէից մէծ մասին տարած մահուան կերպը Եկեղեցական պատմիներուն, մասնաւորապէս Եւսէբիոսի, այնչափ ընդարձակօրէն ըրած նկարագրութիներէն իրեւոյ իմացուիլ:

Երկրորդ գարուն սկիզբները՝ Անտիոքի Խոհանոսի եպիսկոպոսը Քրիստոսի հաւատքին համար վկայելու կոչուեցաւ : Փօխանակ ղորհութելու կրած շարչարանացը վերայ կը պարձենայ . “Սիրիային Հռովմ” կ'ըսէ , իր առ Հռովմայ Եկեղեցին գրած թղթին մէջ “Վայրենի գաղաններու հետ կը մարտնչիմ , ցամաքով եւ ծովով , գիշերով եւ ցերեկով տար ընձառիւծներու մէջ (աշխիքն զինուորաց գնդի մէջ) շղթայակապ , որնց հետ աղէկ վարուելով աւելին ևս կը չորանան : Ատկայն անոնց ինձ հասուցած չորիքներովը օրէ օր աւելի Յիսուսի աշտկերառութեանը մէջ կը կըրթուիմ , բայց գեռ ասովլ չեմ արդարացած : Ո՞՛ , երբ սասց վայրենի անոնց դիմացը գամ , որոնք ինձ համար պատրաստուած են , և զանաք զիս սովաննելու պատրաստ գտնեմ , զանոնք զիս առանց յապաղման դիշատելու պիտի քաշալերեմ , որ զիս ոմանց նման չը գործածեն , որնցմէ վախնալով չեն մօտենար : Եւ եթէ կամու զիս շըսպանանեն , պիտի գրգռեմ քիրենք : Ներեցէք ինձ , ես գիտեմ ինչ որ իմձ համար աղէկ է : Հիմայ սկսած եմ աշակերտ մը ըլլով , ոչ տեսանելի և ոչ անտեսանելի բանի մը կը հոգամ , որ

ոէս զի միմիսյն Քրիստոսը վաստիմ : Թնդ կրակը և խաջը , թնդ վայրենի անանոց խումբը , թնդ սովորներու կոտրումը և անդամներու յօշոտումը , թնդ ամբողջ մարմացն ծամուիլը եւ սատանային բոլոր շարիքը իմ վրաս գան . թնդ ասոնք այսպէս ըլլան , միայն թէ ևս էարող ըլլամ Քրիստոս Յիսուսը վասակելու ” :

Երբ հուսկ յետոյ ընդունած վըճիւը ՚ի գործ կը դրուէր , անվեհեր գէմ առ գէմ առիւծներուն դիմաց կանգնեցաւ : Սակայն առիւծները անոր վէհ և մեծարելի երեւութէն և անտարակոյս այն շնորհքէն , որ անոր մարմէն ցոլանող կը թուէր , վախցան : Յայց անիկայ մեծ ձայնով մը պուաց ըսելով . “Քրիստոսի ցորեանն եմ , վայրենի անասնոց ականներովք աղացուելու կ'երթամ , սրպէս զի անտարաստ հաց մը շնուրիմ ո : Վերջապէս վայրագ կենդանիները զառւրբ մարտիրոսն բռնելով սպաննեցին : Անիկա Տրայանոսի կայորութեան մետասաներորդ տարին մարտիրոսացաւ , Քրիստոսի 109 թուին :

Ի Խարժմանութեան  
8 . Տամաճեան :

# Ա. Ռ. Ա. ՍՊԵԼ

## ՄՈԼԵԲՆԴՈՒԹԵՆԸ ԾՆՈՒՆԴ

### Ա Ռ Ա Ծ

**Ի** Պետերբուրգ 1873 թ տպագրուած մի Ռուսերէն պատկերազարդ Գրքի մէջ, որ ունի այսպիսի լերնագիր – Ո-ՂԵՐՋ Ա. Քաղաքին Երաստացի Ե-ամենայն Ա. ՏԵՂԵՐՋ – հետեւեալն կը կարգանք :

“Սուրբ Յարութեան Տաճարէն արտաքսուաք, գրան մօտ, ‘ի ձախակուլմն կը գտնուի մի մարմարիսնեայ ճեղքուած սին, յորմէ ծագուած է շնորհքն, այս ինքն սուրբ լոյսն, եւ որ ամենէն կը յարգուի և կը համբռուաւի, ինչպէս յուղղափառաց նոյնպէս եւ յանուաղ զափառաց և ‘ի Հայոց Այս սեան վերայ հետեւեալ աւանդութիւնն կը պատմուի Պարթենիս միայնակեցի գրուածոց մէջ – Մի ժամանակ, երբ Յոյներն ստատիկ ճնշուած էին Տաճակական լուծին տակ, մեծատուն եւ հարուստ Հայերն խորհեցան Յոյներն Ա. Գերեզմանէն և Յարութեան Տաճարէն գուրս հանել: Ժողովեցին մեծագումար գրամ, կաշառեցին Երուսաղէմի Կառավարութիւնն եւ հաւատացուցին Տաճար թէ սուրբ լոյսն կ'ելնէ ոչ թէ Յունաց հաւատոց շնորհիւ, այլ բոլոր Քրիստոնէից .քանիզ նոյն իսկ մեք Հայքս եթէ այն տեղ գտնուինք, կորող եմք լոյս ստանալ: Տաճիկներն կատարեցին Հայոց կամքը և այնպէս վճռեցին, որ միոյն Հայք լոյս ստանան Ա. Գերեզմանէն: Ռուսիացան ու յնծացան Հայք և գրեցին ամեն երկիր իրենց ազգակիցներուն, որպէս զի ուխտի գան յԵրուսաղէմ՝ որչափ կարող են, յայտնելով որ իրենց կամքն կատարուած է. եւ արգարեւ ժողովեցաւ մեծ բազմութիւն Ռուս-

տաւորաց Հայոց: Հասաւ Աւագ շուբաթն, Հայք խռնեցան ՚ի Տաճարն. իսկ ինեղձ Յոյներն արտաքսուեցան Տաճկաց զօրքերէն: Ո՞չ, ի՞նչ անպատում գառնութեամբ և ցաւօք պատշարեցան Յոյնք: Յունաց միակ միութարութիւնն էր Փրկչի Գերեզմանն և սոյն Գերեզմանէն արտաքսուեցան և գոներն փակուեցան: Հայք Եկեղեցւոյ մէջ են. իսկ ուղղափառք արտաքսուեկեցւոյն ՚ի փողոցս: Հայք կը ցնծան: իսկ Յոյնք կ'արտասուեն: Հայք հանդէս կը կատարեն: իսկ Յոյնք կը հեծեն և կը հառաջեն: Ռուղղափառք կանդած են զրան հանդէպ հրապարակի մէջ: իսկ Տաճկական զօրքն շրջապատած է և կը հսկէ, որպէս զի խռովութիւն շըլինի: Թէ Պատրիարքն և թէ ժողովուրդն մամեր բռնած են իրենց ձեռքն և կը յուսան գոնէ ՚ի Հայոց շնորհք և լոյս ստանալ Տաճարի լուսամուտէն: Բայց Աստուած ուրիշ կերպիւ մնօրինած էր և կամեցած էր իւր հրեղէն մատամբ ճշմարիտ հաւատոց ցոյց տալ և իւր հաւատարիմ ծառաներն, ինեղձ Յոյներն միսիթարել մեծաւ միմիթարութեամբ:

Լոյս ենելու ժամանակին անցաւ, և լոյս քիայ: Հայք ստոկացին, սկսան լալ, աղաղակել և խնդրել Աստուծմէ, որ լոյս տայ իրենց: Բայց Աստուած քըլսեց նոյս խնդրուածքը: Կէս ժամէն աւելի անցաւ, և գարձեալ լոյս քիայ: Օրն պայծառ է և օգն գեղեցիկ: Պատրիարքն նստած է յաջակողմն: Յանկարծ որոտումն եղեւ և ձախակողմնան միջն մարմարունեայ սիւնն կայծակի հարուածէն ճեղքեցաւ և այս ճեղքուածէն հուր ելաւ բոցավոռ: Պատրիարքն իսկոյն ելաւ, վառեց իւր մամերըն և նոյն մամերէն վառեցին բոլոր ուղղափառ քրիստոնեացք: Ամենքն ուրախացան, ամենքն յնծացան: իսկ

ուղղափառ Արաքներն սաստիկ ուրախութենէն սկսան սատնուը, կաքաւելել և աղաղակել. “Թու միայնեսմեր Աստուածըն, Յիսուս Քրիստոս. միէ ուղղափառ Քրիստոնէից Ճմարիտ հաւատն”<sup>(\*)</sup>: Եւ սկսան վաղվազել բավանդակ Երուսաղէմի մէջ և աղաղակներով ու գոչիւն ներով բոլոր քաղաքն գղրեցնել: Ա. րաքներն մինչեւ յարդ տոյն աւուր յիշտակն կը պահպանեն, կ’ոստնուն, կը ծեփահարեն, կ’աղաղակն գերեզմանի շուրջն, կը փառաբանեն միակ Ճմարիտ Աստուածն Յիսուս Քրիստոս և կը մեծացուցանեն ուղղափառ հաւատն: Իսկ տաճիկ զօրքերն, որոնք շրջապատեալ կը հսկէին, երբ կայծակի հրաշքն տեսան, զարմացան և զարհուրեցան: Այս տաճիկներէն մին, Օմէր անուն, որ Արքահամու Վանքին մօտ կանգնած կը հսկէր, իսկոյն հաւատաց ՚ի Քրիստոս և աղաղակեց. “Միէ Ճմարիտ Աստուածն Յիսուս Քրիստոս, միէ Ճմարիտ հաւատն ուղղափառաց: Այսպէս աղաղակելով տասն և հինգ կանգունի չափ բարձրութենէ թռաւ գէալ ՚ի քրիստոնէայքն և իւր սոքերն կարծր մարմարիսին դիպան, իբրև փա-

(\*) Արքքներն ոչ թէ այսպէս կ’ասեն, այլ հետեւեալ կերպիւ:

“Իւ Մասիհ աճանա  
Պի պամճօ իշտարանա  
Նէնա իւթօմ ֆարահա  
Վիւ եակու-ք հաղանա  
Լա պին իլլա պին իւ Մասիհ որոց  
Թարգմանութիւնն է.

“Քրիստոս եկաւ առ մեղ,  
Իւր արեամք գնեց զմեղ.  
Այսօր մեք ուրախ եմք  
Եւ Հրէայք տրտում  
Հաւատքը միայն Քրիստոսի հաւատքն է”:

Ծ. Խ.

փակ մոմի: Մինչեւ յայսօր կը տեսնուին ոտից հետքերն, պատկերացած իբրեւ կակուղ մոմի վերայ: Թէ և ունուղղափառներն կը ջանան քերել եւ անհետացնել, բայց ես իմ աշօքս տեսի և ձեռօքս շօշափեցի: Իսկ սիւնն ձեղք քուածով հանդերձ կանգուն կը մնայ: Օմէր զինուորն սոտնլով առաւ իւր զէնքն, երկամն քարին մէջ միսեց իբրեւ կակուղ մոմի մէջ, և անդադար կը փառաբանէր զՔրիստոս: Այս պատճուաւ Տաճիկներն գլուխը կարեցին, և մարմինը այրեցին, իսկ ոսկերքն Յուներն ամփոփեցին մի սափորի մէջ եւ դրին մեծին Պանաքեսայ կանանց վանուց մէջ, յորմէ մինչեւ ցորդ կը բուրէ անուշահուաւթիւն: Հոյք մնացին ՚ինելքու, գերեզմանի մօտ, մնացին ամօթահար, քանզի լցո ըրտացան: Երսուազէմի Փաշան և Տաճկաց միւս մէծամեծներն սասաիկ բարկացան Հայոց վերայ, կ’ուղէին կոտորել, բայց Սուլթանէն վախցան և միայն սաստիկ պատժելով գոհ եղան”:

Ընթերցողք անշուշո սիմոնի զարմանան տոյն առասպելին վերայ, մենք չենք զարմանար, քանզի Յունաց Կվերըն այնպիսի առասպելապատում զրոյցներ սերմահած է և կը սերմանէ ժողովը գեան մէջ ոչ յունադաւան աղգացվերայ, մանաւանդ Հայոց վերայ, որմերը յաւաջ բերածն թերեւա ամենէն համեստըն է: Մէք կը զարմանամք աւելի Ռուս Հեղինակի թեթեւամտութեան վերայ, որ յԵրուսաղէմ կը ճանապարհօրդէ, աչօք ամեն բան կը դիսէ, Լուսաւորիակի հանդիսին ներկայ կը գտնուի, լուսոյ ոչ թէ հրաշեւք՝ այլ ՚ի ձեռաննէ մարդկան վասին կը տեսնէ և դարձեալ հաւատա ընծայելով իրմէն թերեւս հարիւր տարի առաջ գրուած մի յունական առասպելի, զայն կ’օրինակէ և կը հրա-

առարկէ իւր ձանտպարհորդական Աւ-  
շլյուշին մէջ : Եւ աւելի զարմանալին  
այս է , որ Պետերբուրգի Հոգեւոր Սի-  
նօդն եւս , առանց առատպելներն յա-  
պաւելու , կը վաւերացնէ սոյն Գիրքն ,  
որ իբրև կարեւոր ձանաղարհացոյց և Տե-  
ղացոյց հարիւրներով կը տարածուի ժո-  
ղովրդեան մէջ , որոնք հազարներով  
յերուաղէմ կը գան , թող չ'կողնե-  
րու մէջ տարածուածներն , բանզի Հե-  
ղինակն կը յայսնէ յառաջարանին մէջ  
թէ՝ յօրինած է ու միայն բարեպաշտ  
ու խոտաւորաց համար , այլ և նոցու հա-  
մար , որը փափաք ունեին , բայց պա-  
րուգաներէն կ'արգելուին ձանապար-  
հորդել ՚ի Պաղետոտին , ուստի և սոյն  
պատկերացարդ Ո-շլյոյց առաջի աշոց  
ունենալով և կարգալով կարող են մա-  
սամբ իրենց փափաքն լցուցանել և մը-  
խիթորիլ :

Երբ Սիրոյ և ձշմարտութեան Աւե-  
տարանի պաշտօնէութիւնն այսօքան կը  
քաջալերէ մովեռանդաւթիւնն ու մնա-  
պաշտութիւնն , ՚ի հարկէ ժողովրդոց  
մէջէն չեն վերջանար բնաւ ատելու-  
թիւնն , խուօլութիւնն , թերահաւա-  
սութիւնն , նիւթապաշտութիւն և այլն :

Ցաւալին այս է , որ մեր խեղճ Աշ-  
գըն , ողորմելի Աղջն , Քիւրգերէն ա-  
ւելի Քրիստոնեաներէն կը նախատուի ,  
կ'անարգուի , և գարձեալ առանց զգա-  
լու և զգաստանալու՝ ՚ի նոցանէ օդ-  
նութիւնն կը յուսայ , բարութիւնն կը  
յուսայ , փրկութիւնն կը յուսայ :

### ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆԻՔ

Անդղեական երեք զահաւոր նա-  
ւեր խարիսխ ձգտծ են Յոսպէի նա-  
ւահանգստին մէջ , յորոց իւրաքան-  
չիւրն կը սրարունակէ 800 զինուորներ  
եւ զօրականներ : Սոյն զինուորական  
նաւուց ընդհանուր Հրամանատարն  
յերուաղէմ եկաւ 200 զօրականնե-

րով եւ Տեղւոյս կառավարութեան  
կողմէն ընդունուեցաւ պատուաւոր  
գիմաւորութեամբ :

Ցիշեալ նաւուց զինուորներն եւ  
պաշտօնակատարներն կարգաւ 60 խա-  
հատ պիտի ացելին Երանաղէմին և  
դառնան :

### ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆՔ

### ԴՐԱԽՏԻ ԸՆՏԱՆԻՔ

Ե

### ՀՐԱԽԻՒՐԱԿ ԱՐԱՐԱՏ ԵԱՆ

Երկարասիրութիւնք

Խ բ ի մ ե ա ն Հ ա յ ր ի կ ի :

Սոյն Երկասիրութեանց առաջինն  
հրատարակուած է արգեամբ Գերազ-  
նիւ Աստուածատուր Զունդ Ասպետի .  
իսկ երկրորդն Աղնուամեծար Յակովի  
էֆէնասիի Նորատունիւան : Արարագետն-  
Հրա-իւանն երկրորդ տափագրութեամբ է ,  
որ ՚ի լցո կ'ընծայուի եւ իւր բովան-  
դակութիւնն ծանօթ է արգէն ընթեր-  
ցող Հասարակութեան . իսկ Դրախտի  
Ընդունիչն առաջին անգամն է , որ լցո  
կը տեսնէ ի պէտք Հայոց Ընդունեաց :

Սոյն երկասիրութիւնն ուշ մեր  
ձեռքն հասաւ . ուստի եւ գրական  
գնահատութիւնն ուրիշ անգամի կը  
թողումք :

### ԿՐԹԱՐԱԿ

### ԵՐԵՍԵՐԵՆԵԿԵՆ ԲԵՇԵՑ

ԴԱՎ Ը.

ՀԵՐՄԱՆ ԵՒ ՈՆԵՄԻՄ

Գին 60 դարայ :

# ՑԱՆԿ

## Ա. ՊՐԻԼ.

Կրթարան Աւետարանական բանից . . . . .	ԴԱՍ Ը.
-Հերմաս եւ Ոնեսիմ. (Եպ. Լ վել)	73-81
Փանի մի Հարց - Պատասխանի . . . . .	81-83
Երեմիա մարգարէ . . . . .	83-86
Ես ալ Հայ եմ . . . . .	87
Խրախոյս . . . . .	88
Ողբ Հայկուհոյն . . . . .	89-90
Զարչարանք Նախկին Քրիստոնէից . . . . .	91-93
Առասպել մոլեռանդութենէ ծնունդ առած . .	94-96
Ժամանակագրականք . . . . .	96
Կոր հրատարակութիւնք . . . . .	96

---

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՔ

- Ա. Միօնը ամսէ ամիս կը հրատարակուի 24 երեսէ բազկացեալ մէկուկէս  
ութածալ թղթով :
- Բ. Տարեկան գինն է երկու արծաթ Մէջիտիէ , ճանապարհի ծախքով  
միասին + կանխիկ վճարելի :
- Գ. Ջատ տետրակ առնել ուղղվ ոյեց է ամեն մէկ տետրին շորս դա-  
հեկան վճարէ :